ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1962 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱՖՂԱՆՍՏԱՆԻ, ԻՐԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ

1962 թ. մայիսի 22-ից 26-ը Բաքվում կայացավ Աֆղանստանի, Իրանի և Թուրքիայի նոր և նորագույն շրջանի պատմության ու տնտեսության պրոբլեմներին նվիրված Համամիութենական գիտական սեսիա։ Սեսիան կազմակերպել էին ՍՍՌՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտը, Ադրբեջանի, Վրաստանի և Ուզբեկստանի Գիտությունների ակադեմիաների Արևելագիտության ինստիտուտները և Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորը։ Սեսիային մասնակցում էին ինչպես Մոսկվայի և Լենինգրադի, այնպես էլ Թբիլիսիի, Դուշանբեի, Երևանի, Տաշքենտի, Բաքվի, Աշխարագի արևելագետները։

Սեսիայի պլենար նիստում ողջույնի խոսք ասաց Ադրբեջանի ԳԱ պրեզիդենտ Զ. Խալիլովը, որն ընդգծեց հարևան երկրների պատմության ու տնտեսության պրոբլեմներին նվիրված գիտական ներկա սեսիայի կարևոր նշանակությունը։

Պլենար նիստում զեկուցումներով հանդես եկան ՍՍՌՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Ռ. Ախրամովիչը, Ադրբեջանի ԳԱ Արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր Ա. Ալիզադեն, Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի բաժնի վարիչ Վ. Ծիրուլսկին, նույն ինստիտուտի գիտական ինֆորմացիայի սեկտորի վարիչ Ա. Վարդանյանը և Արևելյան գրականության հրատարակչության դիրեկտոր Օ. Դրեյերը։

Պլենար նիստում լսվեց Հայաստանի ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինճիկյանի զեկուցումը «Իրանի և Թուրքիայի նոր և նորագույն շրջանի պատմության պրոբլեմների ուսումնասիրումը ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորում» թեմայով։ Զեկուցողը նշեց, որ սեկտորը գիտական տարբեր պրոբլեմներ մշակելիս լայնորեն օգտագործում է հայկական հարուստ աղբյուրները և հենց այդ տեսակետից իր լուման է մտցնում սովետական արևելագիտության զարգացման գործում։ Սա կանգ առավ նաև այն հարցի վրա, որ ուսումնասիրվող երկրների ներքին կյանքը, քաղաքացիական պատմությունը շատ հաճախ անտեսվել են սովետական պատմաբանների կողմից, մինչդեռ դրանք պետք է լինեն մեր արևելագետների ուշադրության կենտրոնում, քանի որ այդ հարցերի խորը գիտական ուսումնասիրումը հնարավորություն կտա ճիշտ մեկնաբանել նշված երկրների վարած արտաքին քաղաքականությունը։ Զեկուցման վերջում անդրադառնալով ազգային բուրժուազիայի երկակի բնույթի և անկախության համար մղված պայքարում նրա դերի հարցին, զեկուցողը շեշտեց, որ անհրաժեշտ է նման երևույթների գնահատման գործում ելնել պատմականության սկզբունքից։

Սեսիայի աշխատանքները ընթանում էին երեք առանձին սեկցիաներում։ Աֆղանստանի, Իրանի և Թուրքիայի սեկցիաներում կարդացվեց մոտ 60 գիտական զեկուցում։

Իրանական սեկցիայում կարդացվեցին 22 զեկուցումներ։ Դրանք ընդգրկում էին Իրանի նոր և նորագույն շրջանի պատմության բազմաթիվ հարցեր։ Մի շարք զեկուցումներ նվիրված էին Իրանի բանվորական շարժման պատմությանը։ Այսպես, Տ. Շահինը (Բաքու) զեկուցեց «Առաջին բանվորական պարտիայի ստեղծումը Իրանում» թեմայով, իսկ Ա. Շամիդեն (Բաքու) «Իրանի բանվորական շարժման մեջ ռեֆորմիզմի հարցի շուրջը» թեմայով։ Իրանում բանվոր դասակարգի առաջացման խնդրին էր նվիրված Զ. Արդուլաևի զեկուցումը։ «Մարքսիզմ-լենինիզմի դաղափարների ֆալսիֆիկացիան Իրանում» թեմայով հետաքրքիր զեկուցում կարդաց Ա. Ադահին (Բաքու)։ Նա նշեց, որ ներկայումս Իրանում, ինչպես կապիտալիստական մյուս երկրներում, իշխող ռեակցիոն իդեոլոգիայի ամբողջ սիստեմը ուղղված է հիմնականում կոմունիստական աշխարհայացքի դեմ։

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը Իրանում ունի ավելի քան կես դարի պատմություն։ Վախենալով Իրանում հասարակական մտքի զարդացման գործում մարքսիստական գաղափարների ռևոլյուցիոնականացնող ազդեցությունից, իշխող ռեակցիոն շրջանները ամեն դնով ընդարձակում և ուժեղացնում են ռեպրեսիաները պրոգրեսիվ ուժերի դեմ։ Աշխատավորությանը խաբելու բոլոր միջոցները, սկսած կրոնական թմրադեղից մինչև մարքսիզմ-լենինիզմի ռեֆորմիստական, ռևիզիոնիստական աղավաղումները և Ֆալսիֆիկացիան, մոբիլիզացվել են կոմունիստական աշխարհայացքի դեմ պայքարելու համար։

Զեկուցումների գերակշռող մասը նվիրված էր Իրանի ռևոլյուցիոն շարժումների պատմությանը։ Այսպես, օրինակ, զեկուցումներ կարդացվեցին «Իրանական էմիգրանտական թերթերը 1905—1911 թթ. ռևոլյուցիայի նախօրյակին» (Ի. Հաթեմի), «Իրանական ռևոլյուցիոն կազմակերպությունները Միջին Ասիայում» (Ա. Մատվեև), «Սաթար խանը և 1908—1909 թվականների Թավրիզի ապստամբության դեմոկրատական մյուս գործիչները» (Ն. Բելովա) և «1905—1911 թթ. իրանական ռևոլյուցիայի պրոբլեմները ժամանակակից իրանական պատմագրության մեջ» (Ս. Ալիև) թեմաներով։ Խոսելով իրանական պատմագրության մեջ 1905—1911 թթ. ռևոլյուցիոն շարժումների գնահատման հիմնական ուղղությունների մասին Ալիևը նշեց, որ գոյություն ունեն երեք հիմնական ուղղություններ։ Առաջին ուղղությունը փորձում է իրանական ռևոլյուցիոն շարժումները և նրա շարժիչ ուժերը գնահատել այն ժամանակվա ռևոլյուցիոն մաոր բուրժուազիայի տեսանկյունով։ Երկրորդ ուղղությունը ձգտում է մի կողմից արդարացնել իրանական լիբերալների դավաճանական գործունեությունը և նրանց ու բարձրաստիճան հոգևորականությանը ներկայացնել որպես ժողովրդական շարժման առաջնորդներ և հերոսներ, իսկ մյուս կողմից՝ երկրորդ պլանի վրա մղել ժողովրդական մասսաների և նրանց առաջնորդների գործունեությունը։ Երրորդ ուղղությունը ընդհանրապես ռևոլյուցիոն այդ շարժումը համարում է անժամանակ և ժխտում է նրա օրինաչափ լինելը։

«Ֆեոդալական հողատիրության քայքայումը Իրանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» թեմայով զեկուցեց Շ. Թաղիևան։ Նա կանգ առավ 19-րդ դարի 80-ական թվականների իրանական գյուղում ապրանքային արտադրության զարդացման հարցի վրա և նշեց, որ դա կապիտալիստական հարաբերությունների առաջացման շրջանն էր։ Այդ փոփոխությունները բնականաբար ազդեցին ֆեոդալական հողատիրության ձևերի վրա։ Նշանակալից չափով աճեց մյուլքադար-կալվածատերերի թիվը և այլն։

Իրանում բնակվող բազմաթիվ վաչկատուն ցեղերին նստակյաց դարձնելու պրոբլեմին էր նվիրված Վ. Տրուբեցկոյի զեկուցումը։ Զեկուցման մեջ մանրամասն նկարագրված էր վաչկատուն ցեղերի նստակյաց դառնալու տնտեսական հիմքերը՝ ցեղերի խաները վերածվում են նստակյաց կալվածատերերի։ Զեկուցողը հանգել է այն եզրակացության, որ չնայած վաչկատուն ցեղերի նստակյաց դառնալը և տնտեսական արխաիկ ձևերի վերացումը, անկասկած, Իրանի համար ունի պրոգրեսիվ նշանակություն, սակայն իմպերիալիզմի կողմից ստրկացված երկրում նստակյաց դառնալը կատարվում է դոեհիկ եղանակներով և հսկայական մարդկային ու նյութական կորուստներ է պատճառում այդ ցեղերին։ Ժամանակակից Իրանի արդյունաբերական հիմնական ճյուղերի հարցի մասին զեկուցեց Ն. Աղասին։ Նա նշեց, որ ժամանակակից Իրանում արդյունաբերության ամենազարգացած ճյուղը նավթարդյունաբերությունն է, որը և գտնվում է միջազգային նավթային մոնոպոլիաների ձեռքում։ Իրանում ընդհանրապես բացակայում է ծանր արդյունաբերությունը։ Համեմատաբար զարդացած ճյուղեր են տեքստիլ և շաքարի արդյունաբերությունը։ Բայց մինչև իսկ այդ ճյուղերը ի վիճակի չեն բավարարելու երկրի պահանջները։ Չնայած ետպատերազմյան շրջանում կառուցվել են թեթև արդյունաբերության մի շարք գործարաններ, բայց Իրանի տնտեսական ստրուկտուրան առաջվա պես մնում է հետամնաց և կիսագաղութային։ Ազգային արդյունաբերության առկա ճյուղերն էլ խորը ճգնաժամ են ապրում։ Խորը ճգնաժամ է ապրում և Իրանի գյուղատնտեսությունը։ Այդ կապակցությամբ 50-ական թվականների ագրարային հարցի սրման մասին զեկուցումով հանդես եկավ Ռ. Սեիդովը։ Զեկուցողը հատկապես կանգ առավ այն հարցի վրա, որ այդ տարիներին նկատվում է կուլակային տիպի հողատեր գյուղացիների թվի աճ, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում, գյուղատնտեսական տեխնիկայի որոշ աճ, կապիտալիստական տիպի տնտեսությունների զարդացում և այլն։ Բայց, չնայած այս բոլորին, Իրանի ագրարային կարդերի հիմքում շարունակում է մնալ նրա կիսագաղութային էությունը։ Հողագործության որոշ կապիտալիզացիան և կիսատ պռատ «ռեֆորմները» չեն կարող լուծել ագրարային հարաբերություններում եղած հակասությունները։

«Իրանի ուսումնասիրումը ՍՍՌՄ-ում» թեմայով զեկուցում կարդաց Ն. Կուզնեցովան։ Զեկուցողը նշեց, որ Իրանի պատմության, տնտեսության տարբեր հարցերը խորը կերպով ուսումնասիրվում են սովետական գիտնականների կողմից և թվարկեց բազմաթիվ հեղինակներ և աշխատություններ։ Զեկուցման հիմնական թերությունն այն էր, որ ինչպես զեկուցման, այնպես էլ նույն թեմայով հրատարակության համար պատրաստված աշխատության մեջ ընդգրկված են միայն ռուսերեն լեզվով լույս տեսած աշխատությունները։ Մինչդեռ սովետական ռեսպուբլիկաներում տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ գրքեր՝ Իրանի պատմության վերաբերյալ, որոնք չեն կարող անտեսվել լոկ այն պատճառով, որ աշխատության հեղինակը, կամ բիբլիոգրաֆիայի կազմողը անկարող է կարդալ այդ լեզուներով լույս տեսած աշխատությունները։

Իրանական սեկցիայում մտքերի աշխույժ փոխանակություն եղավ Ռ. Ղազիի «Քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրումը Սովետական Միությունում» զեկուցման շուրջը, որը կարդացվել էր պլենար նիստում։ Քուրդ ժողովրդի հերոսական պայքարը ուսումնասիրվել է սովետական գիտնականների կողմից։ Ազատագրական այդ պայքարի պատմությանն են նվիրված մի շարք աշխատություններ։ Բայց դրանք զերծ չեն որոշ էական սխալներից։ Այդ սխալները առաջին հերթին արտահայտվում են նրանում, որ Քուրդիստանի ռևոլյուցիոն առանձին շարժումների բնութագրման գործում որոշ հեղինակներ հաշվի չեն առնում Քուրդիստանի տնտեսական և քաղաքական ստրուկտուրան և հաճախ աշխատում են քուրդ ժողովրդի ռևոլյուցիոն շարժումները կապել միայն իմպերիալիստական պետությունների քաղաքականության հետ։ Իսկ որոշ հեղինակներ, ընդհակառակը, քրդական ռևոլյուցիոն բոլոր շարժումները և զինված ապստամբությունները դիտում են իմպերիալիստական տերությունների քաղաքականությունից անջատ և համատարած կերպով դրանք գնահատում որպես պրոգրեսիվ շարժումներ։ Այսպիսի դիրքորոշումներով, իհարկե, չի կարելի օբյեկտիվորեն տալ քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների պատմությունը։ Ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ գլխավորն այն է, որ այդ շարժումները հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական բնույթ են կրում և համընկնում քուրդ ժողովրդի գերակշռող մեծամասնության ազգային շահերի հետ։

Զեկուցման քննարկման ժամանակ ընկ. ռնկ. Մ. Ալիզադեն, Ա. Շամիդեն (Բաքու) այն միտքն արտահայտեցին, որ որոշ քրդական շարժումներ, ինչպես, օրինակ, Սմկոյի գլխավորած շարժումը Իրանում ավազակային բնույթ ունեին և ուղղված էին հասարակ ժողովրդի դեմ, ուստի դրանք ոչ մի դեպքում ազատագրական շարժումներ համարվել չեն կարող։

Գ. Ակոպովը (Երևան) իր ելույթում ցույց տվեց Սմկոյի գլխավորությամբ տեղի ունեցած շարժման էտապները։ Փաստերի հիման վրա նա նկարագրեց շարժման սկզբնական շրջանի և վերջին շրջանի տարբեր բնույթը, այն, որ եթե սկզբում շարժումը հակաֆեոդալական և ազատագրական բնույթ ուներ, ապա գնալով այն դարձավ իմպերիալիստական պետությունների նպատակներին ծառայող շարժում, գյուղացիական մասսաները հեռացան նրանից և այլն։

Հայաստանի արևելագետները Իրանական սեկցիայում հանդես եկան երեք զեկուցումներով։ «1918—1921 թթ. Իրանում ազգային-ազատագրական շարժումների գնահատականի շուրջ» թեմայով զեկուցում կարդաց Հ. Եգանյանը։ Զեկուցողը հատկապես կանգ առավ այն հարցի վրա, որ Իրանական Ադրբեջանում ծավալված շարժումը սովետական որոշ հեղինակներ գնահատել են որպես մի շարժում, որը նպատակ ուներ ստեղծել Ադրբեջանական անկախ պետություն՝ բուրժուական ռեսպուբլիկա։ Զեկուցողը բազմաթիվ փաստերով հերքեց այդ գնահատականը և փորձեց ապացուցել, որ այդ շարժումը նպատակ ուներ ամբողջ Իրանը ազատագրել իմպերիալիստական լծից և որոշ ավտոնոմ իրավունքներ ձեռք բերել ադրբեջանական ժողովրդի համար։ Ինչ վերաբերում է Գիլանում ծավալված շարժումներին, ապա զեկուցողը նշեց, որ այդ հարցում ևս թույլ են տրվել սխալներ։ Ելնելով ռևոլյուցիոն այդ շարժումների առանձին ղեկավարների հետագա ճակատագրից, որոշ հեղինակներ շարժման պարտության ամբողջ հանցանքը վերագրել են այդ ղեկավարների թույլ տված սխալներին, մինչդեռ երկրորդ պլանի վրա է մղվել անգլիական իմպերիալիստների ինտերվենցիան, որը զեկուցողի կարծիքով, շարժման պարտության հիմնական պատճառը պետք է համարել։

Այս զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակության ժամանակ Ս. Ալիզադեն նշեց, որ Իրանական Ադրբեջանում ծավալված շարժման ղեկավարները չէին համակրում Սովետական իշխանությանը։ Իսկ Մ. Ալիզադեն և Բ. Հուսեյնովը նշեցին, որ ճիշտ է զեկուցողի այն թեզը, որ շարժումը նպատակ ուներ ազատագրել ամբողջ Իրանը։ Մ. Ալիզադեն հատկապես նշեց, որ շարժման ղեկավարները Ադրբեջանը վերանվանեցին ոչ թե Ազադիստան (ազատության երկիր), ինչպես կարծում են որոշ հեղինակներ, այլ Ազադիսթան (ազատության ձգտող)։

Տեղեկագիր, 9—7

Արևելագիտության սեկտորի աշխատակից Դ. Ակոպով զեկուցում կարդաց «Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը իրանական Քուրդիստանում» թեմայով։ Զեկուցման մեջ վեր էր հանվում իրանական Քուրդիստանում ներքին շուկայի ձևավորման առանձնահատկությունները, կապված համաշխարհային կապիտալիստական տնտեսության ոլորտի մեջ նրա ներգրավման հետ։ Բայց շնորհիվ կապիտալի կուտակման աննշան լինելուն և երկրում իշխող ֆեոդալական-միապետական կարգերին կապիտալիզմը Քուրդիստանում հնարավորություն չունի թևակոխելու արդյունաբերական ոլորտը։ Նա դերիշխում է առևտրում և գնալով ավելի է ներթափանցում գյուղատնտեսության մեջ։ Զեկուցողը ֆեոդալական սեփականությունը կապիտալիստականի վերաճելու եղանակները ուսումնասիրելու հիման վրա փորձեց պատասխանել գիտության մեջ դեռևս չպարզաբանված հարցին, հողի նկատմամբ սեփականատիրական հարաբերությունների բնույթը և տրանսֆորմացիան, ֆեոդալական ձևերից կապիտալիստական ձևերի փոխվելու ժամանակ։

Իրանական սեկցիայում «Ժամանակակից իրանական պատմագրությունը Անդրկովկասը Ռուսաստանին միանալու մասին» թեմայով զեկուցում կարդաց Բ. Բալայանը։ Զեկուցողը նշեց, որ վերջին տարիներին իրանական բուրժուական պատմագրությունը մեծ ուշադրություն է հատկացնում ռուս-պարսկական երկրորդ պատերազմի առաջացման պատճառների ուսումնասիրմանը, մի պատերազմ, որի հետևանքով Անդրկովկասը վերջնականապես միացավ Ռուսաստանին։ Իրանական պատմաբանները առաջ են քաշում տարբեր տեսակետներ, հաճախ հակասական։ Բայց հիմնականում սուբյեկտիվ բոլոր այդ կոնցեպցիաները հասցնում են Թուրքմենչայի հաշտությունից հետո ռուս-իրանական և անգլո-ռուսական հարաբերությունների սխալ գնահատականին և լռության են մատնում Անդրկովկասը Ռուսաստանին միանալու օբյեկտիվ պրոգրեսիվ հետևանքները։

Իրանական սեկցիան իր աշխատանքների վերջում որոշում կայացրեց սիստեմատիկաբար կազմակերպելու նման գիտական սեսիաներ և ուժեղացնել կոորդինացիան՝ գիտա-հետազոտական թեմատիկ պլանների գծով։ Որոշման մեջ նշվեց, որ մի շարք հրատարակված աշխատություններում սխալ են գնահատվել Իրանի պատմության առանձին հարցերը, հատկապես ազատագրական և ռևոլյուցիոն շարժումների հետապնդած նպատակները և շարժիչ ուժերը։ Որոշման մեջ հատկապես ընդգծվեց, որ ընդհանրացնող աշխատություններ և ձեռնարկներ գրելիս պետք է ներգրավել ոչ միայն Մոսկվայի և Լենինգրադի, այլև ռեսպուբլիկաների արևելագետների լայն շրջաններին։

Թուրքական սեկցիայում լսվեցին և քննարկվեցին 22 զեկուցումներ, որոնցից 8-ը նվիրված էին նոր շրջանի պատմության հարցերին, 10-ը՝ նորագույն և 4 զեկուցում և գիտական հաղորդում՝ Թուրքիայի էկոնոմիկայի և արդի տնտեսական վիճակի տարբեր պրոբլեմներին։

Թուրքիայի նոր պատմության հարցերի շուրջ կարդացվեցին հետևյալ զեկուցումները. Բ. Մ. Դանցիգ (Մոսկվա)—«Մերձավոր և Միջին Արևելքի ուսումնասիրությունը Ռուսաստանում 18-րդ դարում», Օ. Ի. Դիդինեյշվիլի (Թբիլիսի)—«18-րդ դարի վերջի Թուրքիայի արտաքին քաղաքականության մի քանի հարցերը», Պ. Շ. Շարանով (Բաքու)—«Ագրարային հարաբերությունների իրավական հիմքերը Թուրքիայում Թանզիմաթի ժամանակաշրջանում», Ա. Բ. Ավալիանի (Թբիլիսի)—«Թանզիմաթի ռեֆորմների շուրջը», Գ. Լ. Բոնդարևսկի (Մոսկվա)—«Թուրքիան և 1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը», Յու. Ա. Պետրոսյան (Լենինգրադ)—«Նոր նյութեր երիտթուրքական շարժման պատմության վերաբերյալ», Ե. Ղ. Սարգիսով (Երևան)—«Առաջին համաշխարհային պատերազմին կենտրոնական տերությունների բլոկում Օսմանյան կայսրության հանդես գալու հարցի շուրջը», Դ. Զ. Ալիև (Բաքու)—«Մի քանի ներքին հակասությունները «Իթթիհաթ վե Թերաքքի» պարտիայում»։ Նոր և արժեքավոր փաստական նյութերի ընդգրկումով հետաքրքրություն ներկայացրեցին Օ. Դ. Դիդինեյշվիլու, Բ. Բոնդարևսկու, Ե. Սարգիսովի, Յու. Պետրոսյանի և Դ. Ալիևի զեկուցումները։ Օ. Դիդինեյշվիլին իր զեկուցման մեջ օգտագործելով տեղական աղբյուրները փորձեց լուսաբանել Վրաստանի նկատմամբ Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությունը 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և Քյուչուկ-Կայնարջիի հաշտությունից հետո։ Զեկուցողը կանգ առավ Վրաստանի դեմ Ախալցխայի փաշային օգտագործելու սուլթանական մտադրությունների վրա, որոնք սակայն Թուրքիային չհաջողվեց իրականացնել։ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմը Թուրքիային ստիպեց նորից հրաժարվելու Վրաստանում հաստատվելու փորձերից։ Դ. Ալիևն իր զեկուցման մեջ ցույց տվեց, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և առանձնապես պատերազմի տարիներին երիտթուրքական պարտիայի զեկավարության մեջ առկա են եղել սուր տարա-

Ձայնություններ, ներքին պայքար, որոնք խանգարել են Թուրքիային դուրս գալու համաշխարհային պատերազմից և դրանով իսկ խուսափելու ծանր պարտությունից։

Գ. Բոնդարևսկին արխիվային հարուստ նյութի հիման վրա վերհանեց սուլթանական Թուրքիայի երկդիմի և խարդախ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ 1904—1906 թթ.։ 1904 թ. ընթացքում Ստոկհոլմում գաղտնի բանակցություններ էին տարվում Ռուսաստանի դեմ թուրք-շվեդական ռազմական դաշինք կնքելու շուրջ։ 1905—1906 թթ. Լոնդոնում ընթացող անգլո-ճապոնա-թուրքական խիստ գաղտնի բանակցությունների ժամանակ քննարկվում էր անգլո-ճապոնական դաշինքին Թուրքիայի միանալու հարցը։ Չնայած այն բանին, որ անգլիական կառավարությունը ամենայն զգուշությամբ թաքցնում էր հիշյալ բանակցությունները և բազմիցս պաշտոնապես հերքում այդ մասին մամուլի միջոցով տարածվող լուրերը, բանակցությունների ողջ ընթացքը լուսաբանող գաղտնի փաստաթղթերը ժամանակին ձեռք են բերվել և այժմ պահվում են Մոսկվայի արխիվներում։

Ս. Ղ. Սարգիսովն իր զեկուցման մեջ հիմնավորեց այն տեսակետը, որ Օսմանյան կայսրությունը ընդգրկվել է առաջին համաշխարհային պատերազմի մեջ ոչ թե եռյակ դաշինքի տերությունների և հատկապես Գերմանիայի գործադրած ջանքերի շնորհիվ, ինչպես պնդում են որոշ հեղինակներ, այլ իր սեփական նախաձեռնությամբ՝ իր պանթուրքիստական նվաճողական պլանները իրականացնելու համար։ Հենց այդ նպատակով երիտթուրքական կառավարության հրավերով 1913 թ. Թուրքիա ժամանեց Լիման ֆոն Սանդերսի միսիան թուրքական բանակը վերազինելու և վերակառուցելու համար։ Հեղինակը բազմաթիվ փաստերով ցույց տվեց, որ իրավացի չեն այն սովետական պատմաբանները (Ա. Ֆ. Միլլեր, Ա. Ա. Մոգիլևիչ և Մ. Լ. Հայրապետյան, Ֆ. Ի. Նոտովիչ), որոնք եռյակ դաշինքի կողմ Օսմանյան կայսրության հանդես գալը պատճառաբանում են Անտանտի պետությունների թույլ ջանքերով, նրա դիվանագետների պասիվությամբ։ Այդ կապակցությամբ Ս. Սարգիսովը միանգամայն անհիմն է համարում որոշ հեղինակների այն պնդումը, թե իբր Թուրքիան կարող էր անցնել Անտանտի տերությունների լագերը, եթե Ռուսաստանը համաձայնվեր 1914 թ. օգոստոսի բանակցությունների ժամանակ նրա կողմից առաջ քաշված պայմաններին։

Յու. Պետրոսյանի (Լենինգրադ) զեկուցումը հետաքրքրական էր նրանով, որ հեղինակը 1961 թ. հունիս-հուլիս ամիսներին Ռումինիայում եղած գործուղման ժամանակ հայտնաբերել էր երիտթուրքերի կողմից էմիգրացիայում (Փարիզում, Ժնևում և Կահիրեում) հրատարակված քաղաքական բրոշյուրները, որոնք կարևոր աղբյուրներ են երիտթուրքական շարժման սկզբնական շրջանի ուսումնասիրման համար։ Այդ բրոշյուրները ներկայումս գտնվում են ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի գրադարանում և մատչելի են մասնագետներին։

Թուրքական սեկցիայի նիստերում առավել մեծ հետաքրքրություն ներկայացրեցին Թուրքիայի ռևսպուբլիկական շրջանի պատմության հարցերին և ժամանակակից պրոբլեմներին նվիրված զեկուցումները. Ա. Մ. Շամսուտդինով (Մոսկվա)—Քեմալ Աթաթուրքի արտաքին քաղաքականության սկզբունքները, Ա. Ն. Խեյֆեց (Մոսկվա)—Մ. Վ. Ֆրունզեի միսիայի դերը ՍՍՌՄ-ի և Թուրքիայի միջև բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործում, Դ. Ե. Երեմեև (Լենինգրադ)—Քեմալիզմը և պանթուրքիզմը, Ռ. Դ. Սահակյան (Երևան)—1920—1923 թթ. սովետա-թուրքական հարաբերությունների մի քանի հարցերը ժամանակակից թուրք հեղինակների աշխատություններում, Ն. Էֆենդիևա (Բաքու)—Անատոլիայի հարավում ֆրանսիական օկուպանտների դեմ թուրք ժողովրդի մղած պայքարի պատմությունից (1919—1922 թթ.), Մ. Ա. Հասրաթյան (Մոսկվա)—Ազգային միասնության կոմիտեի միջոցառումները Թուրքիայի սեփական շինարարության մեջ, Ռ. Պ. Կորնիենկո (Մոսկվա)—Թուրքիայի բանվորական շարժման հիմնական հարցերը ժամանակակից էտապում, Ա. Ա. Բարան (Մոսկվա)—Քաղաքական պայքարի արտացոլումը թուրքական պարբերական մամուլում, Ե. Ֆ. Լուդշուվեյտ (Մոսկվա)—Գերմանական ֆաշիզմը Թուրքիայում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին։

Ռ. Դ. Սահակյանի զեկուցումը նվիրված էր սովետա-թուրքական հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջանի պատմության հարցերին, որոնք (ինչպես և սովետա-թուրքական հարաբերությունների առանց բացառության բոլոր հիմնական հարցերը) ժամանակակից թուրք հեղինակների՝ պատմաբանների, անցյալի քաղաքական ու ռազմական գործիչների, ժուռնալիստների հրապարակած բազմաթիվ աշխատություններում, պատմության դասագրքերում, քաղաքական հուշերում բացահայտ ֆալսիֆիկացիայի են ենթարկվում։ Խեղաթյուրելով պատմական իրականությունը և նենգափոխելով փաստերը թուրք հեղինակները գործն այնպես են ներկայացնում, որ իբր 1920 թ. քեմալական Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև դիվա-

նագիտական հարաբերություններ հաստատելու մեջ շահագրգռված էր միայն վերջինս «իր ներքին վիճակն ամրապնդելու համար», ուրանում են սովետական նյութական, ռազմական, բարոյական օգնության վճռական դերը Թուրքիայի ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի գործում։ Թուրք պատմաբանների գրքերում աղավաղված է 1921 թ. Մոսկվայի ու Ղարսի պայմանագրերի պատմությունը, 1922—1923 թթ. Լոզանի կոնֆերանսում սովետական պատվիրակության գրված դիրքը և այլն։

Պետք է նշել, որ թվարկված զեկուցումներից ոչ բոլորն էին գտնվում գիտական պատշաճ բարձրության վրա։ Եթե Մ. Հասրաթյանի, Ռ. Կորնիենկոյի, Ա. Ռարաեի զեկուցումներում նոր, թարմ փաստեր բերվեցին Թուրքիայի ժամանակակից կյանքում տեղի ունեցող փոփոխությունների, նոր երևույթների մասին, ապա Ա. Շամսուտդինովի և Ն. Էֆենդիևայի զեկուցումները կազմված էին հայտնի փաստերի հիման վրա, ուստի և իրավացիորեն չրավարարեցին մասնագետներին։

Թուրքական սեկցիայի աշխատանքի դրական արդյունքներից մեկն այն էր, որ նա նպաստեց Թուրքիայի նորագույն շրջանի պատմության առանձին պրոբլեմների մի քանի սկզբունքային կողմերի պարզաբանմանը և հստակ ձևակերպմանը։ Զեկուցումների քննարկմանը մասնակցողները գլխավոր ուշադրությունը դարձրեցին ազգային բուրժուազիայի քաղաքականության գնահատականի, քեմալիզմի էվոլյուցիայի վրա՝ ընդգծելով ազգային բուրժուազիայի և նրա քաղաքական վարքագծի երկակի բնույթը, իմպերիալիզմի հետ գործարքի մեջ մտնելու նրա հակումները, որոնք ի վերջո երկիրը բերեցին պատերազմի և ռեակցիայի լագերը։ Հիշյալ հարցերը խառնաշփոթ ձևով էին ներկայացված Դ. Երեմեևի «Քեմալիզմը և պանթուրքիզմը» թեմայով զեկուցման մեջ։ Առանց լուրջ հիմնավորման զեկուցողը պնդում էր, որ իբր քեմալիզմի և պանթուրքիզմի միջև ոչ մի ընդհանրություն չկա, դեռ ավելին, որ քեմալիզմը լրիվ հակադրվում է պանթուրքիզմին։ Փաստագուրկ էր նաև զեկուցողի այն պնդումը, թե իբր Քեմալը հետևողականորեն պայքարել է կրոնի ու ֆեոդալիզմի դեմ։ Դրանով իսկ զեկուցողը ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունն ու վարած քաղաքականությունը փորձում էր կտրել-անջատել նրա դասակարգային հիմքից, պատմական պայմաններից։ Նյութ ունեցող ընկերները՝ Ա. Բազիյանցը, Բ. Դանդիդը, Օ. Գիգինեյշվիլին, Հ. Ինճիկյանը, Ե. Լուդշուվեյտը, Ա. Շամսուտդինովը նշեցին, որ զեկուցողը կարևոր հարց է բարձրացրել, սակայն չի կարողացել այն գիտականորեն խորը մշակման և վերլուծության ենթարկել։ Հիշյալ ընկերները այն միտքը հայտնեցին, որ անհրաժեշտ է հստակորեն տալ քեմալական շարժման երկակի բնույթը։ Առաջադիմական կողմերի հետ մեկտեղ մատնանշել նաև քեմալիզմի ռեակցիոն գծերը, թուրքական կառավարության շովինիստական ներքին և ագրեսիվ արտաքին քաղաքականությունը։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ համարվեց վերանայել մեր պատմական գրականության մեջ առկա Քեմալի անձի իդեալականացման տենդենցը, որին հետևելով առանձին հեղինակներ նրան կտրում են իր պատմական միջավայրից, դարձնում անմեղսակից Թուրքիայի արտաքին քաղաքականության ագրեսիվ դրսևորումներում՝ դրանք կապելով բացառապես Քեմալի քաղաքական հակառակորդների հետ։

Թուրքիայի և Իրանի սեկցիաների եզրափակիչ նիստերում քննարկվեցին «Թուրքիայի նորագույն պատմություն (1917—1964)», «Իրանի նոր պատմություն» և «Իրանի նորագույն պատմություն (1917—1964)» կոլեկտիվ մենագրությունների պլան-պրոսպեկտները։

Մայիսի 26-ին սեսիայի եզրափակիչ նիստում ամփոփվեցին սեկցիաների աշխատանքների արդյունքները։ Որպես դրական մոմենտ ընդգծվեց այն փաստը, որ կարդացված զեկուցումների քննարկումը անցավ ստեղծագործական դիսկուսիայի մթնոլորտում և օգնեց պարզաբանելու մի շարք վիճելի գիտական հարցեր։ Հատուկ շեշտ դրվեց արևելագիտական հիմնարկների աշխատանքների կոորդինացման խնդրի վրա։ Սեսիան կարևոր խնդիրներից մեկը համարեց Իրանի, Թուրքիայի և Աֆղանստանի նոր և նորագույն պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը այդ գործում ընդգրկելով մասնագետների լայն շրջաններ։ ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորին առաջարկվեց կազմել և ներկայացնել արտասահմանյան հայկական մամուլի տեսություններ՝ արաբական երկրների վիճակի մասին։

Սեսիան իր որոշման մեջ նշեց կազմակերպչական առանձին միջոցառումների նպատակահարմարությունը։ Այսպես, օրինակ՝ առաջարկվեց Այրարատյանի ԳԱ Արևելագիտության ինստիտուտում ստեղծել Աֆղանստանի և քրդագիտության բաժիններ, իսկ Հայաստանի ԳԱ Արևելագիտության սեկտորը, ի նկատի առնելով նրա աշխատակիցների կազմը և որակը, ինչպես նաև գիտա-հետազոտական պրոբլեմների ընդգրկումը, դարձնել ինստիտուտ։

Որոշվեց մոտ ապագայում հրատարակել սեսիայում կարդացված զեկուցումները։

Հ. Ն., Ռ. Ս.